Այս և Ջուղայի գաղթի մյուս վկայագրումները ներկայացնող մի քանի այլ զրույցների մասին Արմենուհի Սրապյանը գրում է. «...սրանք ավելի զրուցատիպ պատմություններ են, պատմական իրադարձությունների փոքրիկ ճյուղավորումներ ու շեղումներ, իրական դեպքերի գեղազարդումներ, քան բուն առումով զրույցներ»[16]:

Պատմության հյուսվածքում այդ զրույցներին միավորվում ու ընդհանուր խումբ են կազմում նաև այն զրույցները, որոնցում պատկերված է ջուղահայերի կյանքն արդեն գաղթից հետո՝ Պարսկաստանում, ինչպիսին, օրինակ, «Միւս ևս պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն» վերնագրով ԺԴ գլխում ընդգրկված զրույցն է՝ իբրև չարչի ծպտված Շահ-Աբասի ու գաղթական հայ կնոջ մասին, որն իր դիպաշարային ամբողջ ընթացքով ու երկխոսական մանրամասներով ներառվել է Հովհաննես Թումանյանի հանրահայտ «Թագավորն ու չարչին» բալլադում[17]:

Առանձին խումբ են կազմում ժանրի այն երևումները, որոնք, այսպես ասած՝ վերաձևումներ են: Ներծուլվելով պատմագրության տեքստին՝ զրույցն իր հերթին կարող է պարագրկել այլևայլ ժանրեր, ավելի ճիշտ՝ վերաձևել այդ ժանրերը, դարձնել ***զրուցատիպ***: Այդպիսի դեպքերում, ինչպես գրում է Արմենուհի Սրապյանը՝

---

[16] ***Արմենուհի Սրապյան,*** Հայ միջնադարյան զրույցներ, էջ 80: Ի դեպ, նկատենք, որ Դավրիժեցու պատմագրքում առկա մի քանի բուն ժանրային առումով զրույցներ ընդգրկված չեն Արմենուհի Սրապյանի կազմած հայ միջնադարյան զրույցների բավականին ընդարձակ ցանկում, այն դեպքում, երբ իբրև զրույց են ներկայացվել Դավրիժեցու պատմագրքում առկա վկայաբանական բնույթի որոշ նյութեր:

[17] Առաքել Դավրիժեցու՝ ջուղահայերին նվիրված վկայագրությունների և Հովհ. Թումանյանի «Թագավորն ու չարչին» բալլադի ստեղծագործական, տեքստային առնչությունների մասին առավել մանրամասն տե՛ս ***Էդվարդ Ջրբաշյան,*** Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ, Երևան, 1988, էջ 203–213, ինչպես նաև՝ ***Ջավեն Ավետիսյան,*** Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Երևան, 1973, էջ 64–74: